ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Իջևան «01»«09» 2020թ.

Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմն ի դեմս առաջնորդ՝ Տ. Բագրատ եպս. Գալստանյանի, որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Դրամական պարգևատրում տրամադրող կողմ) մի կողմից և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԲՈՒՀ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Հ. Մակարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, (հետագա տեքստում երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը ստանձնում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի առավել հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին դրամական պարգևատրում հատկացնելու պարտականությունները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Դրամական պարգևատրում տրամադրող կողմը պարտավորվում է ԲՈՒՀ-ին վճարել առավել հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողի համար պարգևատրում, որը կազմում է 50.000(հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ամսական 10.000(տասը հազար) ՀՀ դրամ :

2.2. Դրամական պարգևատրում տրամադրող կողմը պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրած միջոցները վճարում է ԲՈՒՀ-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Դրամական պարգևատրում տրամադրող կողմը պարտավորվում է 2020 թ. հոկտեմբերի 01-ից սկսված, յուրաքանչյուր ամիս, 5 ամիս տևողությամբ տրամադրել է 2.1. կետում նշված պարգևատրումը:

2.4. Դրամական պարգևատրում տրամադրող կողմին իրավունք չի վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կողմերը պետք է ապահովեն սույն պայմանագրի 1. կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1. կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3. ԲՈՒՀ-ը պարտավոր է հաշվապահական փաստաթղթերը վարել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, գրավոր տեսքով, որոնք վավերացվում է կնիքներով:

4.3. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ԲՈՒՀ	ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿՈՂՄ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	
Իջևանի մասնաճյուղ ՀՀ	Հայաստանի Առաքելական Սուրբ
Տավուշի մարզ, ք. Իջևան	Եկեղեցու Տավուշի թեմ
Ռիսանողական 3	Տավուշի մարզ, ք.
«Արդշինբանկ»-ի Իջևանի մասնաճյուղ	Իջևան Մելիքբեկյան 5
Հ/Հ՝ 247610017094	«Կոնվերսբանկ» Իջևանի մասնաճյուղ
ՀՎՀՀ՝ 01506928	Հ/Հ՝ 1930061517430100
Տնօրենի պաշտոնակատար՝	ՀՎՀՀ՝ 04703401
Ա. Հ. Մակարյան	Առաջնորդ՝ Տ. Բագրատ եպս. Գալստանյան

Ստորագրություն

Կ.Տ

Ստորագրություն

Կ.Տ